

ՔԱՐՈՋԽՕՍԱԿԱՆ

**ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ՀՕՐ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ, ՄԵԾ ՊԱՀՈՑ
ԱՌԱՋԻՆ ՀՍԿՈՒՄԻՆ
(21 Մարտ, 2024)**

Եւ սաէ ցնա ոմն յաշակերտացն իւրոց. «Տէր, ուսո՛ մեզ յաղօթս կալ»:

Եւ անոր աշակերտներէն մին ըսաւ անոր. «Տէր, մեզի աղօթել սորվեցո՛ւր»:

Մեծ Պահոց շրջանին տեղի ունեցող Հսկումի խորհրդաւոր եւ քաղցր այս արարողութիւնները, կարծէք թէ անպայմանօրէն բան մը կը թելադրեն մեզի, շատերուս զգալ կու տան թէ մեր առօրեաներէն ներս շօշափելի բաց մը կայ, որ պաղ եւ պարապ կը ձգէ մեր հոգիները, ու կը պղտորէ նայուածքը անոնց աչքերուն, ու այդ բացը խօսքն է առաքեալին՝ ուղղուած իր Վարդապետին. «Տէր, ուսո՛ մեզ յաղօթս կալ», «Տէր, մեզի աղօթել սորվեցո՛ւր»: Երբ առաքեալները տեսան իրենց Վարդապետին կատարած հրաշքներն ու լսեցին անոր խօսքերը, փոխանակ անկէ խնդրելու որ իրենց եւս սորվեցնէր ուսուցանել եւ հրաշքներ գործել, խնդրեցին իրմէ որ իրենց միայն աղօթել, Աստուծոյ հետ խօսիլ սորվեցնէր: Ու ի՞նչ կ'ըլլար Աստուածորդուն պատասխանը անոնց. «Երկնաւոր Հայրը կ'ուզէ լսել ձեզի, եւ միշտ պատրաստ է տալու ձեզի իր լաւագոյնը եթէ մաքուր են ձեր սիրտերն ու աղօթքները, որովհետեւ Հայր Աստուած կը լսէ մեր աղօթքները եւ անպայման կը պատասխանէ անոնց»:

Աղօթքը պարտի ըլլալ ամէն հաւատացեալի կեանքին էական պահանջներէն մին. որովհետեւ ան մեր կեանքի միակ կապն է Հայր Աստուծոյ հետ, եւ մեր կեանքի ամենակարեւոր յարաբերութեան գիծը, որ մեզ կը կապէ մեր Արարչին: Ինչպէս որ երեսաներ կարիքը ունին սորվելու ճիշդ ու քաղաքավար ձեւը խօսելու ու վարուելու մարդոց հետ, մենք եւս պէտք է սորվինք գիտնալ ճիշդ ձեւը խօսելու մեր Երկնաւոր Հօր՝ Աստուծոյ հետ: Եւ հիմա որ կանգնած ենք Մեծ Պահոց շրջանի սեմին ու կը գտնուինք ապագայի անորոշութեան շրջանի մը մէջ, կարծէք աւելի մեծ ու զօրաւոր պահանջք կը զգանք գիտնալու թէ ի՞նչ է աղօթելու ճիշդ ձեւը: Որովհետեւ այսպիսի ժամանակաշրջաններու մէջ է միայն որ կարծէք կարիքը կը զգանք աւելի մօտ ըլլալու Հայր Աստուծոյ, որպէսզի արժանանանք Անոր գութին եւ սիրոյն: Եւ ատիկա կարենալ ընելու համար մենք պարտինք սորվիլ ու գիտնալ ճիշդ ձեւը աղօթելու: Որովհետեւ աղօթել միայն մի քանի պարտ ու պատշաճ բառեր արտասանել չի նշանակեր, այլ մենք պարտինք մենք զմեզ աւելի մօտ պահել մեր Արարչին, ամբողջովին բանալով մեր սիրտերը իրեն:

Մանկութեանս զիս ամենաշատ տպաւորող գիրքը եղած էր Տանիէլ Տըֆոյի՝ «Րապինսըն Քրուզօ» երկը, որմէ հաստուած մը ցայսօր դրոշմուած մնացած է մտքիս մէջ: Գրքին հերոսը՝ Րապինսըն Քրուզօ, մեղքերու մէջ լողացող նաւաստի մըն էր, որ նաւաբեկութենէ մը ետք կ'իյնայ անմարդաբնակ կղզի մը, ուր զօրաւոր ջերմէ բռնուելով անկողին կը գամուի: Մէկը չկար որ օգնէր իրեն, շունչ մը որ պապակ շրթունքները զովացնող կաթիլ մը ջուր տար անոր եւ մխիթարէր, ու այդ վիճակին մէջ անոր ձեռքը

կ'իյնայ իր հետ ազատած Աստուածաշունչը, ու բանալով կը կարդայ հետեւեալ տողերը. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ», «Եկէ՛ք ինծի դուք բոլոր վաստակեալներ եւ բեռնաւորներ, եւ ես ձեզ հանգիստ պիտի պարգեւեմ»: Ու կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով այդ գրքին հերոսը եւ ամենամեղ նաւաստին կ'աղօթէ սրտանց, ամբողջական հաւատքով եւ նուիրումով, որովհետեւ իր մէջ կ'արթննայ կեանքի յոյսն ու Աստուծոյ սէրը:

Հնդհանրապէս բոլորս կ'աղօթենք երբ նեղութեան մէջ ենք եւ կամ կ'աղօթենք իբր պարտականութիւն. մեր շրթունքները անզգալաբար կը մըմնջեն բառեր ու այդ բառերու ամբողջականութիւնը կը կոչենք աղօթք: Բայց արդեօք ինչ կը նշանակէ աղօթք կամ աղօթել: Աղօթքը, սիրելի հաւատացեալներ, որ դարձի կը բերէ մեղաւորն ու կը բուժէ հիւանդը հոգեպէս ու ֆիզիքապէս, մեր հաւատքին ամբողջական արտայայտութիւնն է Հայր Աստուծոյ ամենակարողութեան, մեր անձնուրաց սէրն ու բարոյական նուիրումը մեր Արարչին: Մեր աղօթքները միացած անձնագոհութեան՝ կը դառնան գործնական եւ ազդու միջոցները, որոնցմով միայն կարելի կ'ըլլայ կատարելագործել Մարդուն բարոյական առողջութիւնն ու ապահովել Հայր Աստուծոյ ամենագութ սէրը:

Բայց որո՞նք են աղօթքին շարժառիթները, ինչն է որ մեզ կը մղէ աղօթելու. եւ արդեօք ինչո՞ւ կ'աղօթենք: Կ'աղօթենք միայն մենք զմե՞զ բարելաւելու կամ օգտակար ըլլալու ուրիշներու եւ կամ մեր ընկերային շրջանակին: Լուսաւորելու անհունը թէ՛ լաւ թուալու մարդոց, եւ արդեօք մենք իսկապէս կ'օգտուինք աղօթելով: Քաջ վստահ եղէ՛ք սիրելի հաւատացեալներ, այո՛: Մեր աղօթքը կամ խնդրանքը ուղղուած մեր Երկնաւոր Հօր՝ անձնական խօսակցութիւն մըն է Հօր եւ զաւկին միջեւ: Խնդրանքը՝ որ կ'անցնի անձնական պահանջներէն անդին ու կը դառնայ բարենպատակ ու մարդասիրական՝ քաջ վստահ եղէ՛ք որ պիտի օրհնուի մեր Երկնաւոր Հօր կողմէ ու մեզ պիտի չլուսախաբէ: Մենք կրնանք մեր անձերուն համար համեստ եւ ջերմ խնդրանքներով աւելին ընել, բայց ամենաբարին Աստուած չկրնար լոկ մեր շրթունքներու շարժումը հատուցանել, որովհետեւ Մարդուն ծածուկ խորհուրդները անյայտ չեն Հայր Աստուծոյ: Ան՝ մեր փառաբանութիւններէն ազդուելով իր գործածէն աւելի տարբեր բան մը պիտի չընէ, քանի որ Ան յաւիտենական ու անսահման սէրն է եւ իմաստութիւնը: Նոյնիսկ անհունը չկրնար մեզի շնորհել մեր շատերու աւելակալութիւնները: Թերեւս աղօթելն ու աղօթքը չկարենան փոխել մեր գոյութեան նպատակն ու իմաստը, բայց եւ այնպէս հաւանաբար կարենայ մեզ հաշտեցնել ու ներդաշնակել անոնց հետ: Բարիքը՝ որ կենդանի աղօթքն է, արդիւնք է արդար եւ ճշմարիտ հոգիներու, հետեւաբար բարեգործութիւնները ձեւով մը կը դառնան աղօթելու պերճագոյն ձեւն ու ճամբան, որոնք մեզ սանդխամատ մը աւելի կը մօտեցնեն երկնքին ու մեր Երկնաւոր Հօր:

Յաճախ մենք զմեզ կը զգանք ծանրաբեռնուած անծանօթ ու անբացատրելի զգացումներով եւ հոգերով, եւ բնականաբար մեր ներքին մարդը կը փնտռէ Մէկը՝ որուն ամենակարողութեան վրայ վստահութիւն ունի. բանալու իր սիրտը եւ Անոր պատմելու իր խռովքներն ու ներքին ապրումները, որմէ ետք միայն կը զգանք հոգեկան անդորրութիւն մը: Սակայն ինչի՞ պիտի նմանէին մեր աղօթքներն ու խնդրանքները երբ անոնք յառաջ կու գան միայն ցուցամոլութենէ ինքնագովութենէ, յիշեցէ՛ք Աւետարանի Փարիսեցիին ու Մաքսաւորին առակը, ու քաջ վստահ եղէ՛ք թէ երբ աղօթքը կ'անցնի խոնարհութեան սահմանները, կը դադրի որեւէ արժէք ներկայացնելէ ու բնականաբար կը մերժուի:

Կը յաճախենք եկեղեցի սիրելի հաւատացեալներ ու կ'աղօթենք, բայց մեր աղօթք-

ները թող չըլլան փարիսեցիական եւ անձնական, մանաւանդ Մեծ Պահոց այս շրջանին, այլ աղօթենք ճիշդ այնպէս ինչպէս կ'աղօթէին սուրբերն ու մեր երանելի նախահայրերը: Ներդաշնակեցնենք մեր սիրտերն ու հոգիները մեր աղօթքներուն, ներենք մեր պարտապաններուն՝ որպէսզի յառաջիկայ Սուրբ Յարութեան տօնի արշալոյսին Երկնաւոր Հայրն ալ թողութիւն տայ մեր մեղքերուն եւ մեզ բարձրացնէ մեր մեղքերու գոհիչն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից, ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՄԱՍԻՆ

Թէ որ հարկաւոր են գիտութիւնք մարդուս միտքը զարդարելու, առաքինութիւնը հարկաւոր է նոյն գիտութիւնները զարդարելու: Անոնք ամէնն ալ մէկ մէկ գեղեցիկ գոյներ են, բայց մէկ բան մը կը պակսի իրենց, որ է լոյս, եւ առաքինութիւնն է աս լոյս տուողը: Առանց անոր, լուսաւոր ըսուած մտքերն ալ խաւար հոգի մը ունին, եւ երկնքին գաղտնիքը հասկցող աստղաբաշքն ալ մութ անդունդի մը քովերը կը պտտի:

ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ո՛հ, ան ինչ ցաւալի բան պիտի ըլլայ, որ մէկը՝ բոլոր կեանքը կամ կենաց մեծ մասը աշխատելով, ըլլայ լաւ բանասէր մը, լաւ նկարիչ մը, ոսկեգործ մը, ճարտասան մը եւ այլն ու կենաց ծայրը հասած ատենը չգիտնայ ուր կոխելը, ամենահարկաւոր ուսմունքը սորված չըլլալուն համար: Ընդհակառակն, ինչ միսթարական բան է անոր, որ ինչպէս ծովով ճամփորդները հեռուէն ծաղկանց հոտով կ'իմանան, թէ ցանկալի ծովեզերքին մօտեցեր են, այնպէս ինքն ալ իր առաքինութեանցը հոտէն կ'իմանայ երկրի ապահով նաւահանգիստը: Բայց այն հոտը արդէն իր բոլոր կենաց մէջ արտէն կը զգար ու անով աս աշխարհքիս մէջ ալ երջանիկ էր: Վասնզի միայն առաքինութիւնն է զմարդը երջանիկ ընողը թէ հոս եւ թէ հոն:

ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Կը կարծեմ՝ միայն յիմարը կարող է աթեիստ ըլլալ: Մենք պէտք է ընդունինք անհասանելի եւ անիմանալի Աստուծոյ զօրութեան գոյութիւնը, զօրութիւն, որ օժտուած է անսահման իմաստութեամբ եւ գիտութեամբ, զօրութիւն, որ սկիզբ դրաւ Տրեզերքին:

ՔՐԻՍՏԻԱՆ ԲԵՄԵՐ ԱՆՖԻՆՍԷՆ

Երաժշտութեան գոյութիւնը բացառապէս Աստուծոյ փառքի եւ մարդկային հոգիի վերակենդանացումի համար է:

ԵՈՀԱՆ ՍԵՊԱՍՏԻԱՆ ՊԱԽ